

04.06.

4333



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի պարտականությունները կատարող

Արամ Մեյմարյան

«20» 05 2026 թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 065 - 26

Նախաձեռնող՝

«Յունայթեդ քոնսթրուքշն» ՍՊԸ

Լոռու մարզ, Տիգրան Մեծի պող., շ. 63, բն. 13

Գործունեությունը՝

Ոչ մեքաղական օգտակար հանածոյի արդյունահանում

Լոռու մարզ, Լեյնոնպոլի համայնք, Լեյնոնպոլի բնակավայր

Առդիր՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 065 - 26

«20» 05 2026 թ.

**Լոռու մարզի Լերմոնտովոյի գաբրոնների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Յունայթեդ քոնսթրուքշն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության տեսակ՝	Ա կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Լերմոնտովո համայնք, Լերմոնտովո բնակավայր

**Ներածական մաս.** «Յունայթեդ քոնսթրուքշն» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Լոռու մարզի Լերմոնտովոյի գաբրոնների հանքավայրի արդյունահանման աշխատանքների փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներով: Նախատեսվող գործունեությունը, համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ է:

**Նկարագրական մաս.** Լերմոնտովոյի գաբրոնների հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում և տեղակայված է Լերմոնտովո գյուղի հյուսիսային մասում (Վանաձոր և Դիլիջան քաղաքների միջև)՝ Լերմոնտովո բնակավայրի մոտակա շինությունից 833 մ, անտառային հողերից՝ 350 մ, Դիլիջան-Վանաձոր ավտոմայրուղուց՝ 910 մ հեռավորության վրա: Հանքավայրը կապված է Վանաձոր քաղաքի հետ ասֆալտապատ ավտոճանապարհով:

Մոտակա երկաթգծի Վանաձորի կայարանը գտնվում է հանքավայրից 15 կմ հեռավորության վրա: Տեղամասում նախկինում արդյունահանման աշխատանքներ չեն իրականացվել: Հայցվող տեղամասը վարձակալական հիմունքներով պատկանում է ընկերությանը և հանդիսանում է գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր: Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն, քանի որ հայցվող տարածքում նախկինում հանքարդյունահանման աշխատանքներ չեն իրականացվել: Հանքավայրի տարածքում նախկինում խախտված և վերականգնված հողեր, հանված, պահեստավորված, կուտակված հողաբուսական շերտ չկա:





Համաձայն հաշվետվության՝ նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- բացահանքի առավելագույն երկարությունը՝ 404 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը՝ 183 մ,
- օգտակար հանածոյի առավելագույն հզորությունը՝ 158,7 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 4656500 մ<sup>3</sup>,
- օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը՝ 3363,2 հազ. մ<sup>3</sup>,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 7,5 մ,
- մակաբացման ապարների քանակը՝ 368500 մ<sup>3</sup>:

Բացահանքում աշխատանքները նախատեսվում է կատարել տարեկան 260 օր՝ 1 հերթափոխով, 8 ժամ տևողությամբ:

Օգտակար հանածոն տեղափոխվելու է սպառողի և ընկերության տրանսպորտային միջոցներով:

Հանքավայրի բացումը կատարվելու է բացահանքի հյուսիս արևելյան մասից՝ նրա հարավային մասի 2070 մ նիշ ունեցող հորիզոնից դեպի բացահանքի 2199,3 մ բարձրության նիշ ունեցող հանքաստիճան՝ գրունտային ճանապարհի անցումով: Ճանապարհի երկարությունը 1583 մ, 8-10 մ լայնությամբ, առվելագույն հաղթահարվող թեքությունը 91,06%: Բացահանքի 2199,3-2059,3 հորիզոնների բացումն իրականացվելու է նշված ճանապարհից հորիզոնական կտրող կիսախրամների անցումով: Բացահանքի 2054,3-2049,3 հորիզոնների բացումն իրականացվելու է վերոհիշյալ ճանապարհից կտրող թեք խրամների անցումով տեղադրված բացահանքի հարավ-արևմտյան եզրագծով: Մակաբացման ապարների՝ գաբրոյի բեկորներ պարունակող ավազակավերն ու կավավազները ավտոհինքնաթափով տեղափոխվելու են նախագծվող բացահանքի արևմտյան մասում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտ՝ N 2: Իսկ դրեսվան և ջարդոտված հողմնահարված գաբրոնը տեղափոխվելու է բացահանքի սահմաններից դուրս նրա արևմտյան մասում համապատասխանաբար՝ N 1/ և N 1// ժամանակավոր լցակույտեր, որը գտնվում է N 2 լցակույտի հյուսիսային մասում:

Հողաբուսական շերտը հեռացվելու է շահագործման 8-րդ տարում, քանի որ այն Շ-7 և Շ-8-ի շրջակայքում է և տեղափոխվելու է N 3 լցակույտ: Մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել էքսկավատոր-ավտոհինքնաթափ-բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով: Աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 5 մ, թեքության անկյունը՝ 90°, անվտանգության առափնների լայնությունը՝ 2 մ, աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 18-20 մ:

Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Բացահանքի շահագործման աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է տեխնիկական ռեկուլտիվացիա: Լցակույտում մնացած՝ 200 մ<sup>3</sup> ծավալը ավտոհինքնաթափով տեղափոխվելու է բացահանքի 1500 մ<sup>2</sup> հատակի վրա և հարթեցվելու է բուլդոզերի միջոցով:

Հարթեցվելու է բացահանքի ողջ հատակը՝ 32470 մ<sup>2</sup>, N1 և N2 լցակույտերի մակերեսները, ինչպես նաև N3 լցակույտի նախկինում զբաղեցրած մակերեսը (միասին 2925 մ<sup>2</sup>) և արդյունաբերական հրապարակը 200 մ<sup>2</sup>: Ռեկուլտիվացիայի ընդհանուր մակերեսը՝



35595 մ<sup>2</sup>: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա: Ընդհանուր ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը կկազմի 3582,6 դրամ (100,65 դրամ/մ<sup>2</sup>): Գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Ըստ հաշվետվության՝ հանքավայրի տարածքում կարմիրգրքյան բուսատեսակներ և կենդանատեսակներ, ինչպես նաև դրանց աճելավայրեր և ապրելավայրեր չեն հայտնաբերվել: Հայցվող տարածքում բացակայում է ծառաթփային բուսականությունը, ծառահատումներ նախատեսված չեն: Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում:

Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկության՝ հանքավայրի տարածքում արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005): Համաձայն նշված տեղեկագրի՝ բուն հանքավայրի տարածքում սողանքային երևույթներ արձանագրված չեն:

Աշխատանքներն իրականացնելիս բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ZIL մեքենայի վրա հարմարեցված ջրի ցիստեռնով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ՍՄ-ԵԼԵ-1.4 ջրի ցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են բետոնային սեպտիկ հորում, որտեղից սահմանված կարգով պարբերաբար տեղափոխվելու են պայմանագրային հիմունքներով:

Մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվել են մի շարք միջոցառումներ՝ առաջնորդվելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով:

Աղմուկի մակարդակը նորմայի սահմաններում պահելու նպատակով տեխնիկատրանսպորտային միջոցները ապահովված են լինելու խլացուցիչներով: Բոլոր աշխատակիցները ապահովվելու են անհատական պաշտպանության միջոցներով: Մոտակա բնակավայրը գտնվում է բավականին հեռավորության վրա, հետևաբար, աղմուկի մակարդակը բնակելի գոտում կլինի նորմայի սահմաններից ցածր:

Արդյունահանման աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետվող աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ շաբաթական մեկ անգամ,

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես, չեզոքացուցիչ սարքավորումների պարբերական մշտադիտարկումների՝ տարեկան մեկ անգամ,



3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

4. աղմուկի մակարդակի մշտադիտարկում՝ եռամսյակը մեկ անգամ,

5. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ:

Մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված է տարեկան 250000 ՀՀ դրամ, իսկ բնապահպանական միջոցառումների համար՝ 200000 ՀՀ դրամ:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման համաձայն՝ նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ առաջանալու դեպքում իրականացվելու են լրացուցիչ միջոցառումներ (ըստ իրավիճակի)՝ ավելացվելու է կատարվելիք ջրցանը, կրճատվելու է աշխատանքի տևողությունը և այլն:

**Պատճառաբանական մաս.** Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր՝ Լերմոնտովո բնակավայրում իրականացվել է հանրային լսում, որի ընթացքում մասնակիցները հավանության են արժանացրել արդյունահանման իրականացումը: Հանրային լսման ընթացքում նախաձեռնողը պարտավորվել է շահագործման ընթացքում աշխատակիցներ ներգրավել համայնքից, ինչպես նաև աջակցել ազդակիր համայնքին: Արդյունահանման իրականացման ընթացքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, որտեղ կներգրավվեն ազդակիր բնակավայրի բնակիչները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/բացառման նպատակով նախատեսվել են մի շարք բնապահպանական միջոցառումներ՝ մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում (յուղերի, քսայուղերի փոխարինում, պահպանում և պահեստավորում) տարածքից դուրս՝ մասնագիտացված ընկերությունների կողմից, շահագործվող տեխնիկայից արտանետումները նվազեցնելու նպատակով չեզոքացուցիչ սարքերի տեղադրում, շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում և ձայնախլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով, ճանապարհների արտադրական հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի ինտենսիվ ջրում, տարածքի խոնավացում՝ փոշեգոյացումը բացառելու նպատակով, խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ արդյունահանման աշխատանքների ավարտից հետո, աշխատանքների իրականացման ընթացքում ապահովվելու է բուսական աշխարհի օբյեկտների, դրանց աճելավայրերի պահպանությունը, իրականացվելու են կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:



Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են «Օրենսդրության պահանջներին համապատասխան»:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

### Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության ընթացքում անհրաժեշտ է՝

1. արդյունահանման ընթացքում չխոչընդոտել դեպի արոտավայրեր անասունների տեղաշարժին, ապահովել բնակիչների անվտանգ տեղաշարժը,
2. առաջնորդվել «Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջներով,
3. ջարդիչ տեսակավորող կայան նախատեսելու դեպքում փաստաթղթերը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ներկայացնել փորձաքննության,
4. ապահովել հաշվետվությունում ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Յունայթեդ քոնսերուքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լերմոնտովոյի գաբրոնների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Թերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Քրիստինե Հարությունյան